

«Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ
Տնօրեն՝ պարոն Վահան Ստեփանյանին
ՀՀ, ք. Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5Բ

Պատճենը՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ
Գլխավոր տնօրեն՝ պարոն Կոնստանտին Սարոյանին
ՀՀ, ք. Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5Բ

_____ (ա.ս.հ.)

Անձնագիր՝ _____

(սերիա/համար)

Տրված _____ կողմից _____ թ.

_____ (գրանցման հասցե)

ՊԱՀԱՆՁ

Հարգելի պարոն Ստեփանյան,

Սույն գրությամբ տեղեկացնում եմ, որ օրերս Ձեր կողմից դեկլարվող կազմակերպությունից ստացել եմ գրություն, որի համաձայն իմ համար և իմ փոխարեն ընտրվել է ֆոնդ և ֆոնդի կառավարիչ:

Ինչպես արդեն տեղյակ եք, սույն թվականի ապրիլի 2-ին ՀՀ Սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ ԱԾ պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ «Օրենք»/ մի շարք հոդվածների սահմանադրականության վերաբերյալ գործով դիմումը, իր որոշման /այսուհետ՝ «Որոշում»/ 1-5-րդ կետերով որոշել է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերի, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ հոդվածի 6-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին մասը, 76-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Որոշման 8-րդ կետի համաձայն որոշումը ուժի մեջ է մտել հրապարակման պահից, այսինքն սույն թվականի ապրիլի 2-ից:

Ձեր ուշադրությունն են ուզում հրավիրել երկու հանգամանքներին, որոնք վկայում են այն մասին, որ իմ համար և իմ փոխարեն կենսաթոշակային ֆոնդի և կառավարչի ընտրությանն ուղղված Ձեր կազմակերպության գործողությունները չեն բխում գործող ՀՀ օրենսդրության պահանջներից և հակասում են Սահմանադրական դատարանի կողմից Որոշման 6-րդ կետում հայտնած դիրքորոշմանը: Այսպիսով.

1. ՀՀ Սահմանադրական դատարանը, իր 24.01.2014թ աշխատակարգային որոշմամբ կասեցրել է Օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը, որով սահմանված է ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու համար վերջնաժամկետը (այն է՝ 01.01.2014թ.):

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *“Սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության հիման վրա անձի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարվելու դեպքում մասնակցի համար կենսաթոշակային ֆոնդի ընտրությունը կատարում է մասնակիցների ռեեստրը վարողը՝ ծրագրային մոդուլի միջոցով՝ սահմանված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը:”*, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. *“Եթե անձը չի ներկայացրել սույն օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված դիմումը, ապա մասնակիցների ռեեստրը վարողը տվյալ անձի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց և նրա անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրությունից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գրավոր (թղթային) ձևով տեղեկացում է ուղարկում տվյալ անձին: Ընդ որում, սույն մասի առաջին նախադասությամբ նախատեսված տեղեկացումը պետք է պարունակի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված տեղեկությունները:”* ՀՀ Իրավական ակտերի մասին ՀՀ Օրենքի 71.1 հոդվածի 5-րդ ենթակետով որպես իրավական ակտի դադարեցման հիմքերից մեկը նշված է իրավական ակտի կասեցման դեպքը: Այսինքն, Օրենքի 86 -րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը դադարեցված էր 24.01.2014թ. - 03.04.2014թ. Ժամանակահատվածում, ուստի ժամկետների հաշվարկը տվյալ ժամանակահատվածով ընդհատված էր:

Հետևաբար, կատարելով ամենապարզ հաշվարկ, պարզ է դառնում, որ Օրենքի 39-րդ հոդվածի վերը հիշատակված դրույթներով սահմանված ժամկետները Ձեր կազմակերպության կողմից պահպանված չեն:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 968.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *“Ֆոնդի կառավարման պայմանագրով մեկ կողմը (ֆոնդի մասնակիցը) մյուս կողմի (ֆոնդի կառավարչի) հրապարակած ֆոնդի կանոնների համաձայն՝ դրամական միջոցներ է տրամադրում նրան, իսկ մյուս կողմը պարտավորվում է համապատասխան վճարի դիմաց միավորել այդ միջոցները համապատասխան ֆոնդի միջոցներին եւ կառավարել ֆոնդը օրենքին, այլ իրավական ակտերին եւ ֆոնդի կանոններին համապատասխան:”* ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 968.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *“Ֆոնդի կանոններն այն պայմաններն են, որոնց համապատասխան կնքվում են տվյալ ֆոնդի կառավարման պայմանագրերը: Սույն կետով նախատեսված պայմանները միասնական են տվյալ ֆոնդի բոլոր մասնակիցների համար <....> (հոդված 444)”:* ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *“միանալու է համարվում այն պայմանագիրը, որի պայմանները կողմերից մեկը սահմանել է բանաձեւային կամ այլ ստանդարտ ձևերով, իսկ մյուս կողմը դրանք կարող է ընդունել առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ միանալով:”* Հետևաբար, ակնհայտ իրողություն է, որ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հետ հարաբերությունները կարգավորվում են **բացառապես** քաղաքացիաիրավական

պայմանագրերով, իսկ քաղաքացիակաիրավական պայմանագրերը կնքվում են **բացառապես** պայմանագրային կողմերի կամքի ինքնավարության սկզբունքով:

Բացի այդ Որոշման 6-րդ կետով Սահմանադրական դատարանի կողմից տրված դիրքորոշումից ելնելով Օրենքի 38-րդ հոդվածը չպետք է մեկնաբանվի և կիրառվի անձի կամքից անկախ վերջինիս սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող համատեքստում իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան: Հետևվաբար Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձի կամքից անկախ վերջինիս համար համակարգչային մոդուլի միջոցով, այն է՝ առանց անձի կամավոր կատարված գործողությունների վերջինիս համար ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու գործառույթը, որը իրագործվել է Ձեր կազմակերպության կողմից **հակասում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին և չի բխում Սահմանադրական դատարանի կողմից Որոշման 6-րդ կետում արտահայտած դիրքորոշումից:**

Ելնելով վերոնշյալից՝ ևս մեկ անգամ հայտարարում եմ, որ ես՝ _____
(ա.ա.հ.)

ծնված _____ թ. (անձնագիր՝ _____ տրված _____ կողմից
_____ թ., գրանցման հասցե՝ _____),

իմ կամքով չեմ ընտրել որևէ պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ու ֆոնդի կառավարիչ և **ՊԱՀԱՆՁՈՒՄ ԵՄ** Ձեզանից, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրական դատարանի Որոշման 6-րդ կետի պահանջներով (որն ուժի մեջ է մտել հրապարկման պահից, տես Որոշման 8-րդ կետ), որպես անմիջական գործող նորմեր, անվավեր ճանաչել իմ համար և իմ փոխարեն կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու Ձեր կազմակերպության կողմից կնքված առոչինչ գործարքը, միջոցներ ձեռնարկել որպեսզի համապատասխան կառավարիչների կողմից անհապաղ դադարեցվի իմ դրամական միջոցների կառավարման հետ կապված ցանկացած գործողություն և վերջիններիս կողմից իմ գումարները վերադարձվեն՝

_____ (բանկի անվանումը) _____ (հաշվի համարը)

իմ անձնական հաշվին:

հանձնվեն ինձ առ ձեռն՝ նախապես տեղեկացնելով որտեղ և երբ կարող եմ դրանք հետ ստանալ:

ՊԱՀԱՆՁՈՒՄ ԵՄ նաև այսուհետ ձեռնպահ մնալ ՀՀ գործող օրենսդրությամբ ինձ վերապահված իրավունքների ոտնահարումից և խնդրո առարկա գործողություններ կատարելուց քանի դեռ չունեք իմ գրավոր համաձայնությունը դրա վերաբերյալ:

Սույն պահանջը հաշվի չառնելու դեպքում, օգտվելու եմ դատական պաշտպանության իմ իրավունքից, որը երաշխավորված է ՀՀ սահմանադրությամբ և ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով:

Խնդրում եմ ինձ գրավոր տեղեկացնել սույն պահանջի կատարման մասին:

Հարգանքով,

(Անուն ազգանուն/ ստորագրությունը)

« » ապրիլի 2014թ.